

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հենրիկ Բախչինեան

Հայ միջնադարեան բանաստեղծութեան մէջ բազմիցս յիշատակուել ու պատկերուել է քաղաք երեւոյթը՝ թէ՛ առհասարակ, թէ՛ որոշակիօրէն, ամենատարբեր համատեքստերում, տարաբնոյթ իմաստաւորմամբ ու նպատակադրումներով:

Քաղաքը, մասնաւորապէս Երուսաղէմի պատկերով, սկսած Գրիգոր Նարեկացուց մինչեւ ուշ միջնադարեան բանաստեղծութիւնը, կիրառուել է իբրեւ երկնային Արքայութեան խորհրդաբանական նշանակ կամ խորհրդանիշ:

Հայաստանում քաղաքների ու քաղաքային կեանքի ծաղկումը, հիմք է հանդիսացել նաեւ բանաստեղծական երկերում պատկերելու որոշակի քաղաքներ՝ հայաստանեան թէ արտերկրի: Դրանք, ըստ հարկի, ներկայացուել են պատմա-քաղաքական հանգամանքներում, ռազմական կամ տարերային աղետների պայմաններում: Ըստ այդմ, քաղաքների պատկերումը կատարուել է պատմողական-նկարագրական կամ ողբային պատումներով, երբեմն նաեւ հայրենասիրական յոյզերի զեղումներով ու մտորումներով:

Պատմական թատերաբեմում հանդէս եկած որոշ քաղաքներ միջնադարեան մի շարք ֆերթութեաններում հանդէս են բերուել նաեւ իբրեւ քրիստոնէական արժէհամակարգի (Երուսաղէմ, Կ. Պոլիս, Եդեսիա), այլեւ Հայոց աշխարհի, հայ ժողովրդի, նրա հոգեւոր եւ աշխարհիկ իշխանութիւնների (Անի, Վաղարշապատ) խորհրդանիշներ: Ընդամին, միջնադարեան բանաստեղծութեան մէջ քաղաքը կիրառուել

է նաեւ այլաբերական տարաբնոյթ իմաստաւորումներով:

Այս թեման եւ յարակից այլ խնդիրներ են արծարծուում ստորեւ՝ ծաւալուն նիւթի պատմական ու մեկնաբանական քննութեամբ:

Միջնադարեան ինչպէս արձակ, այնպէս էլ չափածոյ տեքստերում, բնականաբար, ի սկզբանէ յիշատակուած են առաւելապէս Աստուածաշնչի միջոցով աւանդուած քաղաքները, յատկապէս քրիստոնէութեան բնօրրան Երուսաղէմը եւ նրա հոմանիշը հանդիսացող Սիոնը: Ըստ քրիստոնէական խորհրդաբանութեան, այդ սուրբ քաղաքն ունի նաեւ իր նախօրինակը՝ երկնային համարժէքը՝ Վերին Երուսաղէմը (ինչպէս եւ Վերին կամ Նոր Սիոնը), որը խորհրդանշում է երկնային Արքայութիւնը: Այդ երկնային քաղաքը կամ վերնաքաղաքը Քրիստոսով նորակերտուած երկնային Եկեղեցին է, որի օրինակով, Սուրբ Հոգու միջոցով, հաստատագրուել է երկրային Եկեղեցին, որպէս Քրիստոսին հաւատացողների համայնք, ինչպէս նաեւ կազմակերպութիւն եւ կառոյց: Այստեղից էլ՝ Եկեղեցին բնորոշող քաղաք խորհրդանիշը:

Վերնաքաղաք խորհրդանիշի դրսեւորումներն առկայ են յատկապէս Գրիգոր Նարեկացու Գանձարանում, որտեղ լաւագոյնս արտայայտուել է մեծ բանաստեղծի խորհրդաբանութիւնը: Այս համակարգի համաձայն, Վերին Երուսաղէմ կամ Նոր Սիոն-Եկեղեցին երկնային քաղաք է, որի որդիներն են յանուն հաւատի զոհուած սուրբ վկաները:

Երանաւէտայք անոր՝ ի Վերինն Երուսաղէմ...
վերնափառաբանն որդիքն նորոգ նոր Սիօնի¹:

(Երանութեամբ աւետուած էք այն-
տեղ՝ Վերին Երուսաղէմում... Նորոգուած
Նոր Սիօն երկնաքաղաքի որդիներն էք):

Այդ խորհրդանշական քաղաքի հիմ-
նադիրները Քրիստոսի սուրբ առաքեալ-
ներն են, որոնց դիմելով՝ բանաստեղծն ա-
սում է.

Քաղաք Աստուծոյ՝ զեկեղեցի
եւ յարկ Բարձրելոյն հիմնացուցիք...

(Աստծոյ քաղաքը՝ Եկեղեցին եւ
Բարձրեալի բնակավայրը հիմնեցիք):

Մեկ այլ տեղ ներբողելով Եկեղեցուն՝
Նարեկացին հետեւեալ կերպ է բնորոշում
նրան.

Անպարտելի քաղաք կամակար հրաշիւք.
բառակերպեան՝ ի մէջ տիեզերաց...
Քաղաք ապաստանի եւ տուն փառքեան:

(Աստծոյ կամարար հրաշքով կեր-
տուած քառակերպարանք անպարտելի
քաղաք աշխարհում... քաղաք ապաստա-
նութեան եւ տուն մեղքերի քառութեան):

Իր ներբողեաններից մեկում Նարեկա-
ցին սրբազան երկնաքաղաքի որդի եւ ժա-
ռանգ է համարել սուրբ Յակոբ Մծբնա-
ցուն, որին գովերգելով՝ ասում է.

Այս՝ որդի պերճալի՝ այնքոք քաղաքի,
այս՝ ժառանգ պըննեցեալ՝ այնմ Երուսաղէմի...²:

(Սա՛ այն քաղաքի պերճալի որդի, սա՛
այն Երուսաղէմի զարդարուած ժառանգ):

11-րդ դարի շարականագիր Սարգիս
Սեւանեցին եւս երկնային Արքայութիւնը

յիշատակում է որպէս սրբերի բնակավայր
քաղաք.

Ի քաղաք Տեառն զօրութեանց եւ ի քաղաք
Թագաւորին մեծի,
նոր ժողովք սրբոցն են ի խաղաղութեան...³:

(Զօրութիւնների Տիրոջ քաղաքում եւ
մեծ Թագաւորի քաղաքում, ուր սրբերի
խմբերն են խաղաղութեան մէջ):

Երկնային Արքայութիւնը կամ դրախ-
տը քաղաք խորհրդանշով է ներկայացրել
նաեւ Ներսէս Շնորհալին իր հանելուկնե-
րից մեկում.

Վեր արեւելք կայր քաղաք մի՝
խիստ բարեւէտ եւ մրգալի.
բուսաստան մեծ՝ աղոտոր այգի:
գերիս յիւր մէջըն պիտէի⁴:

Միջնադարեան մեկ այլ խոշոր բա-
նաստեղծի՝ Առաքել Սիւնեցու (մօտ 1349-
1431) Դրախտագիրք կոչուած երկում եւս
«աստուածատունի դրախտը» խորհրդանշ-
ւում է իբրեւ երկնքում կառուցուած քա-
ղաք: Ուշագրաւ է, որ հեղինակի համոզ-
մամբ, այդ երկնային քաղաքում Արարիչն
իր իսկ արեամբ գնելով՝ մի առանձին տեղ
է յատկացրել հայերի համար.

Եւ ետ բնական զայն տեղն միայն Հայոց
ազգիս՝ մեզ⁵:

Ուշագրաւ է նաեւ, որ բանաստեղծի
կիրառած փոխաբերութեամբ, եթէ երկնա-
յին դրախտը քաղաք է, ապա երկիրը, ա՛յս
աշխարհը գիւղ է: Եւ նա հակադրութիւն-
ների երկար շարանով հանդիպադրում է
այդ քաղաքն ու գիւղը.

1 Նարեկացու Գանձարանից մէջբերումները՝ ըստ
մեր «Գրիգոր Նարեկացու Գանձարանը» աշխա-
տութեան (Բէյրութ, 2016):

2 Գրիգոր Նարեկացի, Ներբող ի սուրբ Յակոբ
Մծբնայ բան մուրալիսան գովեստի, «Մատենա-
գիրք Հայոց», հտ. ԺԲ, Երեւան, 2011, էջ 1004:

3 Օրհներգեր, 7-11-րդ դարեր, աշխատասիրու-
թեամբ Հ. Բախչիսեանի, Երեւան, 2013, էջ 294:

4 Ա. Մնացականեան, Հայ միջնադարեան հանե-
լուկներ (V-XVIII դդ.), Երեւան, 1980, էջ:

5 Այս եւ յաջորդ մէջբերումը տե՛ս Առաքել Սիւնե-
ցի, Դրախտագիրք. հրատարակեց Հ. Ն. Տէր-
Ներսէսեան, Վենետիկ, 1956:

Յայդ օտար գեղդ ու աւագակփ կու նեղացնեն զհեգ.
իսկ անդ ո՛չ գող 'ւ ո՛չ աւագակփ այլ չ'երեւին հեգ:

Յայդ օտար գեղդ մահ տարածամ գայ, դառնացնէ
զհեգ.
իսկ յայն փաղաֆն այլ մահ չըկայ. կենաց կայ յոյս
հեգ...

Անգամ 18-րդ դարի բանաստեղծ Պաղ-
տասար Դպիրը (1683-1768) մի տաղ է ձօնել
երկնաքաղաք Երուսաղեմին («Առ Վերին
Երուսաղէմ Եկեղեցին անդրանկաց»): Ընդ
որում, նա վերջինիս գովերգում է սիրոյ եր-
գերի ոգով ու ոճով, ինչպէս.

Հրով փո գերիս, ո՛վ դու գերապայծառ երանեալ,
շըրջիմ, երերիմ, յոյժ դեգերիմ կարի վարանեալ:

Ռահին փո յարակ կարօտանօք անձկայ ոգի իմ,
սէ՛ր իմ...

Գեղեցկապարուն փո սըրահին խանդակաթ եմ ես,
սէ՛ր իմ⁶:

Այսպիսով, վերնաքաղաք - խորհրդա-
նիշը յարատեւել է հայ քերթութեան մէջ՝
սկսած Գրիգոր Նարեկացուց մինչեւ ուշ
միջնադար...

11-12-րդ դարերում Հայաստանում
քաղաքների ու քաղաքային կեանքի ծաղ-
կումը, որ նպաստել է աշխարհիկ գրական-
ութեան ծաղկմանը, հիմք է հանդիսացել
նաեւ ժամանակի թէ՛ արձակ, թէ՛ չափածոյ
երկերում իրական քաղաքի պատկերման
համար՝ իր բնութեամբ, կառոյցներով ու
բնակչութեամբ, պատմա-քաղաքական
հանգամանքներում, ռազմական կամ տա-
րերային աղետների պայմաններում: Ըստ
այդ, քաղաքի պատկերումը կատարուել է
նկարագրական կամ ողբային պատումնե-
րով, երբեմն նաեւ հայրենասիրական յոյ-
գերի ու մտորումների զեղումներով...

Դեռեւս Ոսկեդարում Մովսէս Խորե-
նացին իր Հայոց պատմութեան մէջ, այն է՝
պատմական արձակում, առաջինը լինելով,
քաղաքային պատկեր է ստեղծել Երուսա-
ղակերտի նկարագրութեամբ: Նոյնպիսի
պատկերներ է ստեղծել Ներսէս Շնորհալին
իր նշանաւոր «Ողբ Եդեսիոյ» պատմական-
ողբական բանքում, որի բուն նիւթն է սել-
ջուկ թուրքերի ասպատակմամբ Միջա-
գետքի ծաղկուն քաղաք Ուռհա-Եդեսիայի
առումն ու աւերումը (1144):

Բանաստեղծը, կիրառելով դիմառնու-
թեան (բարաճնութեան) հնարանքը, Եդե-
սիան պատկերել է անձնաւորուած, իբրեւ
ողբացող «որդեկորոյս, որբ եւ այրի»:
Այս պարագայում նա հետեւել է աստուածաշն-
չեան Երեմիա մարգարէին, որն իր ողբե-
րում աւերուած Երուսաղէմը ներկայացրել
է «իբրեւ կին մի այրի լցեալ տրտմու-
թեամբ» (Ողբ Երեմեայ, Ա, 1):

Անձնաւորուած Եդեսիայի շուրթերով
Ներսէս Շնորհալին նկարագրում է քաղա-
քի ու նրա շրջակայքի չքնաղ ու կենարար
բնութիւնը.

Ջուր կենդանի յինէն բըղխեւ,
գուարթածաղիկ բոյս յօրինեւ,
գետոց նըման վըտակ հոսեւ,
ըզբուրաստանս արբուցանեւ,
ծովն ի միջի իմ ծածանեւ,
փաղցրիկ օղովըն ծիծաղեւ...

Սաղարթաբեր ծառովք ծաղկեւ,
առատագոյն պըտղաբերեւ,
տերեւախիտ հեզիկ շարժեւ,
հոտ անմահից յիւմէ բուրեւ,
մարդոս, բըրբում ինձ ընծիղեւ
վարդ, մանուշակ վերաբերեւ,
առաւօտուն ցօղն իջանեւ,
ոսկեմըման ճանանչ փայլեւ⁷...

6 Պաղտասար Դպիր, *Տաղեր*, աշխատասիրու-
թեամբ Հ. Բախչինեանի, Երեւան, 2007, էջ 168:
Պաղտասար Դպիրից հետագայ մէջքերումները
ես՝ նշում եմ հատորից:

7 Ծնորհալու Ողբից այս եւ հետագայ մէջքերում-
ները՝ տե՛ս Ներսէս Ծնորհալի, *Ողբ Եդեսիոյ*,
աշխատասիրութեամբ Մ. Մկրտչեանի, Երեւան,
1973:

Ողբում Եդեսիան պատկերում է նաեւ իր հոյակերտ ու ամրակուռ շինութիւններով:

Շուրջանակի պարսառատ
պարիսպ ածեալ՝ լայն եւ ամուր,
աշտարակօք բարձր անաւոր,
խմաստապէս՝ առուեստատու,
որպէս գրլուխըն դիպատու
մակաաստ անջին բոլոր,
հաստանեղոյս հիմամբ՝ ի խոր
մահարձանօք պըսակատու,
տունք եւ տանաբք զարմանատու,
շինեալ ի գիրկս իմ ջեղատու...

Այս նկարագրութիւնների բուն նպատակն էր առաւել ցաւազին հնչեցնել քրիստոնէական երբեմնի հզօր ու բարգաւաճ քաղաքի աւերման ծանր իրողութիւնը եւ իր լսարանին արժանի ատելութեամբ համակել քրիստոնէական քաղաքակրթութեան կործանիչ մահմեդական ցեղի հանդէպ...

Ներսէս Շնորհալու անմիջական ազդեցութեամբ ուշ միջնադարի բանաստեղծ Արիստակէս Խարբերդցին գրել է Եդեսիային նուիրուած մի ծաւալուն ներբող⁸: Այս բանաստեղծը եւս Եդեսիան նմանեցրել է բազմազաւակ մօր, որը, սակայն, ոչ թէ ողբում, այլ սնուցում է իր որդիներին, ուստի եւ Խարբերդցին աւելի շատ անդրադառնում է Եդեսիոյ զաւակներին՝ ի դէմս տեղի նշանաւոր հայերի՝ գովաբանելով ու բարի մաղթանքներ յղելով նրանց...

Վերադառնալով Շնորհալու Ողբին, նշենք, որ բանաստեղծն այստեղ, դարձեալ անձնաւորելով, ներկայացնում է նաեւ ժամանակի այն խոշոր քրիստոնէական քաղաքները, որոնց Եդեսիան, իբրեւ եղբրամայր, հրաւիրում է սգակցելու-ողբակցելու իրեն, համարելով նրանց իր սիրելի «քորք

եւ եղբարք» եւ «հարսունք վերին առաքաստի»: Յիշատակում են մասնաւորապէս Երուսաղէմը, Հռոմը, Կոստանդնուպոլիսը, Ալեքսանդրիան եւ Անտիոքը՝ աւերուած քաղաքին սատարելու կամ նրա վրէժը լուծելու կոչով ու ակնկալութեամբ:

Ներսէս Շնորհալու Ողբում ոգեկոչւում են նաեւ իրենց վաղեմի փառքը կորցրած Հայոց քաղաքները: Յատկապէս խոր ցաւով է յիշատակում, աւելի վաղ, Եդեսիայի ծանր վիճակում յայտնուած Անին, որ նոյնպէս անձնաւորուած է, իբրեւ երբեմնի «վայելչական հարսն»:

Բայց եւ ըզբեզ յայս հրաւիրեմ,
արեւելեան քաղաքդ Անի՛,
կըցորդ իմոյս լինել ձայնի
եւ ըսփոփիչ տարակուսի,
քանզի եւ դու երբեմն էիր
վայելչական հարսն ի քօղի,
մերձատուաց՝ յոյժ ցանկալի,
հեռատուաց՝ փափագելի...

Այնուհետեւ բանաստեղծը բաւական հանգամանօրէն նկարագրում է Բագրատունեաց փառաւոր մայրաքաղաքի վայելչական անցեալը, երբ նրա թագաւորը պանծալի «նըստեալ յաթոռ՝ թագն ի գըլխի», եւ երբ նա ծաղկում էր՝ «որպէս այգի ողկուզալի կամ ձիթենի՝ պըտղով ի լի»: Այս դէպքում, ահա, քաղաքի պատկերումը թելադրուած էր բանաստեղծի ներաշխարհում հայրենեաց կործանուած փառքի առթած յոյզերի արտայայտման պահանջով:

Եթե Շնորհալու պատկերած Եդեսիան առաւելապէս համընդհանուր քրիստոնէական արժէքներ խորհրդանշող քաղաք է, ապա Անին խորհրդանշում է Հայոց աշխարհը՝ իր փառապանծ անցեալով եւ աւաղելի ներկայով:

Ներսէս Շնորհալուց յետոյ Անին անդրադարձել են նաեւ այլ բանաստեղծներ: Այսպէս, Մարտիրոս Ղրիմեցին (1620-1683) իր «Պատմութիւն Ղրիմայ

8 Տե՛ս «Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (XVI-XVII դդ.)», հտ. II, աշխատասիրութեամբ Յ. Սահակեանի, Երեւան, 1987, էջ 229-239:

յերկրի» երկում դառնօրէն արձանագրելով հայկական պետականութեան անկման եւ հայութեան տարագրման տխուր իրողութիւնը, որպէս թախծոտ, բայց եւ ոգեշնչող վերյուշ, յիշում է Հայոց մեծաշուք մայրաքաղաքը:

Քաղաքն մեծ Անի՛, մերս ազգի պարծա՛ն,
ի ծաղկաւէտ, հացուտ գաւառս Շիրակվան,
հայկածին գաւակաց տուն լեալ Շարայեան,
գահոյք թագաւորաց ցեղից Բագրատեան⁹:

Մարտիրոս Ղրիմեցուց յետոյ Գրիգոր Օշականցին (1757-1799) մի ամբողջական մեծարժէք բանաստեղծութիւն է ձօնել Անիին¹⁰: Բանաստեղծն, իր իսկ վկայութեամբ, իր շրջագայութիւնների ժամանակ եղել է նաեւ Անիի աւերակներում, քայլել է աւեր պարիսպների լայնքով ու երկայնքով եւ դիտելով երբեմնի շէն ու շքեղ ապարանքների ու տաճարների աւերակները՝ արտասուելով զրել է իր այդ ողբական բանքը: Հայոց մեծահամբաւ մայրաքաղաքն այստեղ պատկերւում է իբրեւ երբեմնի հզոր հայկական պետականութեան պատուար:

Համայն ազանց դու գովելի, քաղաքդ Անի՛
պանծացեալ,
ասպընջակա՛ն թագաւորաց եւ զօրաց՝ արդ
մեմացեալ,
իբրեւ այրի լրբեալ, թողեալ, կոխան ոտից
ընկեցեալ:

Բընակիչք քո աշխարհ օտար հեռացան,
աւա՛ղ, տարագիր, տարագիր, ո՛հ:

Այրիացած Անին մի ժամանակ «դայեկաբար» սնուցել է իր որդիներին «գգուանօք», ինչից եւ չար նախանձով լցուած «նետողաց ազգը» զօրագումար յարձակուել է նրա վրայ, խորտակել նրա

«գգեղեցիկ եւ զբարձրաբերձ» պարիսպները, «զհոյակապ եւ զգեմէթեայ» շինութիւնները. այդուհետեւ՝

Օտարաձայն գոչիւն զօրաց խուժադուժ մինչ
բարձրացան,
ձայն գուսանաց եւ նուագաց որդոց քոց ի սուգ
դարձան,
եւ օրհնութիւնք ժամերգութեանց յեկեղեցեայց
լրեցան...
Համպարազարդ գահատակք եւ տանաք քո
մանկալիցք,
յորս վեհագինք եւ պայազատք էին նոխք եւ
հացալիցք,
այժմ անասունք տեղակալեալք շրջին ի քեզ
հաղցրալիցք:

Բընակիչք քո աշխարհ օտար հեռացան,
աւա՛ղ, տարագիր, տարագիր, ո՛հ:

«Ողբ Եղեսիոյ»ի հետեւութեամբ է գրուած Ներսէս Շնորհալու անմիջական յաջորդի՝ Գրիգոր Տղայի (1124-1193) «Բան ողբերգական վասն առմանն Երուսաղէմի» պատմական-ողբական բանքը¹¹, որի նիւթը Այուբեան սուլթան Սալահդինի բանակի զօրութեամբ Երուսաղէմի առումն ու աւերումն է (1187): Այս երկի մի զգալի մասում եւս կիրառուած է դիմաւորութեան հնարանքը: Այսինքն՝ աւերուած Երուսաղէմը եւս խօսում է իբրեւ որդեկորոյս այրի, որ ողբում է իր ծանրագոյն վիճակը, արտայայտում իր խոկումները, զգացումները, իղձերը: Ի դէպ, աւելի վաղ, Ներսէս Շնորհալին իր հեղինակած Ծննդեան տաղերից երկուսում¹² արդէն անձնաւորել էր «Դաւթի քաղաք» Երուսաղէմը՝ զրելով այսպիսի տողեր:

9 Ա. Մարտիրոսեան, Մարտիրոս Ղրիմեցի, Երեւան, 1958, էջ 145:

10 Տե՛ս Հ. Ոսկեան, Չորս հայ տաղասացներ եւ անոնց տաղերը, Վիեննա, 1966, էջ 110-112:

11 Տե՛ս Գրիգոր Տղա, Բանաստեղծութիւնք եւ պոեմներ, աշխատասիրութեամբ Ա. Օ. Մնացականեանի, Երեւան, 1972, էջ 244-333:

12 Տե՛ս Ներսէս Շնորհալի, Տաղեր եւ գանձեր, աշխատասիրութեամբ Ա. Քեօշկերեանի, Երեւան, 1987, էջ 32-35:

Իսկ դու ընդէ՛ր ես խրոտվեալ, Երուսաղէ՛մ,
եւ հակառակ քո փրկութեանըդ վարանիս...

Դու խընդա՛ եւ գուարնացի՛ր, Երուսաղէ՛մ,
ուրախացի՛ր, բերկրեալ, ցընծա՛, մայրաքաղաք...

Գրիգոր Տղայի Ողբում եւս անձնաւոր-
ութեամբ Երուսաղէմը, ինչպէս Եդեսիան,
ձայնում է ի լուր աշխարհի, երկարօրէն
պատմում է իր մասին, իր անցեալի, իր աշ-
խարհագրական դիրքի մասին եւ, որպէս
քրիստոնէութեան բնօրրան ու Աստուծոյ
քաղաք, ներկայացնում է իրեն՝ որպէս
«ծիր եւ կէտ մէջ աշխարհին»:

Հեղինակն իր անունից պատկերում է
աւերուած սրբազան քաղաքը՝ գործի դնե-
լով այսպիսի ինքնօրինակ համեմատու-
թիւններ.

Այժմ քաղաքն աստուածային,
ուր գերեզմանն էր Յիսուսին,
նրման եղել խանձող փայտին
եւ որպէս խուղ մըրգապահին,
որպէս նընդունկ նըստեալ լըռին
ի վերայ տանըն տըրտմագին
կամ՝ հաւալսան յանապատին
եւ կամ՝ ըզբու յաւերակին:

Այս անգամ եւս, ինչպէս յատուկ է
ողբերին, կորստեան մեծութիւնն ու ցաւը
առաւել ազդեցիկ դարձնելու համար,
պատկերում է այն փառաւոր ու երանելի
վիճակը, որի մէջ է եղել սգացողն աղետից
առաջ.

Եւ որք առ իսըն մըտէին՝
ի հոռ իւղոցըն նիրհէին,
ի յիմ երկու ստեանցս ըմպէին
կաթն եւ գինի, զոր բըղխէին
եւ թէ եւ այլըս մըզէին՝
ի յիւղ եւ մեղըր թըմէին
եւ որքան զիսըն նըմէին՝
անոյշ հոտով հեշտանային:

Երուսաղէմի բարգաւաճ անցեալի
նկարագրութեամբ բանաստեղծը մեր առ-
ջեւ բացում է միջնադարեան քաղաքն իր

եռուզեռով, գինեխումներով, երգ ու պա-
րով ու խաղերով...

Երուսաղէմը՝ Գրիգոր Տղայի ողբական
բանքում, ինչպէս Եդեսիան՝ Շնորհալու
Ողբում, առաւելապէս համընդհանուր
քրիստոնէական արժեհամակարգը խորհր-
դանշող քաղաք է:

Դարեր անց, նոյն պատմական իրո-
ղութեանն անդրադարձել է նաեւ ուշ միջ-
նադարի նշանաւոր բանաստեղծ Ներսէս
Մոկացին (Բեղլու, Վանեցի. վախճ.
1625)¹³: Վերջինիս համար այդ հեռաւոր
պատմական անցքի գրական վերարտադ-
րումն ամենեւին ինքնաբաւ հետաքրքրու-
թիւն չի եղել, այլ որոշակիօրէն զուգոր-
դուել է ժամանակի քրիստոնէական աշ-
խարհում եւ յատկապէս Հայաստանում
տիրող վիճակին: Մահմեդականութեան
ծանր լծի տակ հեծող Երուսաղէմը որոշ
չափով եղել է նաեւ համանման ողբերգա-
կան կացութեան մէջ յայտնուած Հայաս-
տանի խորհրդանշելը եւ ձեռք բերել հոգե-
ւոր հայրենիքի նշանակութիւն, մանա-
ւանդ որ դեռեւս վաղ միջնադարից սկսած
այդ քաղաքը դարձել էր Հայոց հոգեւոր
խոշոր կենտրոններից մեկը: Ըստ այսմ, թէ՛
Գրիգոր Տղայի, թէ՛ Ներսէս Մոկացու
նշուած երկերն ունեն նաեւ որոշակի ազ-
գասիրական երանգաւորում:

Այդպիսին է նաեւ Ներսէս Մոկացու
կրտսեր ժամանակակից Մարտիրոս Ղրիմե-
ցու «Ողբ Երեմիա մարգարէին» երկը, որ
աստուածաշնչեան Երեմիայի յիշեալ ողբե-
րի մի իւրօրինակ գրական մշակում է¹⁴:
Այդպիսին են նաեւ նոյն այդ ժամանա-
կաշրջանում հանդէս եկած Նիկողայոս
Ստամպուլցու եւ Յակոբ Բաթուկենց Թո-
խաթցու (1573-1657/ 1663)¹⁵ Երուսաղէմին.

13 Տե՛ս Պ. Խաչատրեան, Հայ միջնադարեան պատ-
մական ողբեր (ԺԴ-ԺԷ դդ.), Երեւան, 1969, էջ
280-293:

14 Այս Ողբի վերաբերեալ տե՛ս Ա. Մարտիրոսեան,
Մարտիրոս Ղրիմեցի, էջ 34-42:

նուիրուած տաղերը¹⁵: Վերջինիս մէջ կար-
դուած ենք:

Յընծութիւն եւ դու աշխարհի համայն,
առաւել՝ Հայոց մեր ժողովրդեան.
արանց եւ կանանց, ծերոց եւ մանկան,
սուրբ Երուսաղէմ, քաղաքդ անմըման:

Երեւ տանար եւ աստ հիացական.
մեծին Յարութեան եւ Սուրբ Ծննդեան,
եւ Սուրբն Յակոբ փառատրական.
սուրբ Երուսաղէմ, քաղաքդ անմըման:

Յաւելենք, որ ժամանակի մեկ այլ
նշանաւոր բանաստեղծ՝ Երեմիա Չելեպի
Քէօմիւրճեանը (1637-1695), հեղինակել է
Երուսաղէմի սրբութիւնների մի գովերգու-
թիւն, որն առանձին պատկերազարդ
գրքոյով հրատարակել է իր իսկ հիմնած
տպարանում¹⁶:

Վերջապէս, նշենք նաեւ, որ Պաղտա-
սար Դպիրը գովերգել է ոչ միայն Վերին,
այլեւ իրական, երկրային Երուսաղէմը, ո-
րին այլաբերել է իբրեւ «սուրբ սիրամարդ
ոսկէփետուր»...

«Ողբ Եդեսիոյ»ում Ներսէս Շնորհա-
լին, Անիից բացի, փառազրկուած հայրենի
քաղաքներից յիշատակում է նաեւ Հնա-
գոյն ոստան Վաղարշապատը՝ ցաւագին
բացականչելով:

Ո՞ր եւն գահոյք թագաւորի Վաղարշապատ քո
քաղաքի:

Վաղարշապատը միջնադարում հա-
մարուել է սուրբ քաղաք, քանի որ կրել է
իր մէջ Հայոց հոգեւոր գահանիստ էջ-
իւր մէջ Սուրբ Կաթողիկէին, եւ ըստ այդմ
միաձնի Սուրբ Կաթողիկէին, եւ Հայոց ողջ
մարմնաւորել-խորհրդանշել է Հայոց ողջ
հոգեւոր եւ աշխարհիկ իշխանութիւնը,
հայկական պետականութիւնը: Այդպէս է

այն պատկերուած պատմագիր-բանաս-
տեղծ Ստեփանոս Օրբելեանի (Սիւնեցի.
վախճ. 1305) «Ողբ ի Սուրբ Կաթողիկէն»
երկում, որի նիւթն է 1299 թվականին մոն-
ղոլական ասպատակմամբ Վաղարշապատի
առումն ու Սուրբ Կաթողիկէի աւերումը:

Օրբելեանի Ողբում իր սրբութիւնից
զրկուած նախկին մայրաքաղաք Վաղար-
շապատը նոյնպէս հանդէս է բերուած դի-
մառնաբար՝ իբրեւ ողբացող Արքայուհի:

Նրման մեծի արեւոյնայն,
այս ի՞նչ, այս ի՞նչ սուգ անհմարին¹⁷:

Արքայուհի-Վաղարշապատը եւս ի-
րեն ձայնակցելու է հրաւիրում իր դուստ-
րերին՝ Հայոց միւս բոլոր վանքերին ու
քաղաքներին...

Անձնաւորուած սուրբ էջմիածին-Վա-
ղարշապատի միջոցով բանաստեղծն ար-
տայայտում է մայր հայրենիքում, Սուրբ
Կաթողիկէի շուրջ հայութեան համախմբ-
ման, հայկական պետականութեան վերա-
կանգման ու զօրեղացման դարաւոր իղձը:

Ստեփանոս Օրբելեանից յետոյ այդ
նուիրական իղձը փայփայած Առաքել Բա-
ղիշեցին (մոտ 1380-1454) իր «Ողբ մայրա-
քաղաքին Ստամպոլոյ» պատմական բան-
քում համոզուած ասում է, թէ փրկարար
Փրանկ զօրքերը՝

Թագաւորէն յէջմիածին՝ Վաղարշապատ սուրբ
քաղաքին¹⁸:

13-րդ դարում իր շրջակա վանքերով
հանդերձ, բարգաւաճել է Եկեղյաց գաւառի
Երզնկա քաղաքը: Այդ ծաղկուն ու վաճա-
ռաշահ քաղաքը տեսած վենետիկցի նշա-
նաւոր ճանապարհորդ Մարկո Պոլօն ասել

15 Տե՛ս «Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը
(XVI-XVII դդ.)», հտ. I, աշխատասիրութեամբ Յ.
Սահակեանի, Երեւան, 1986, էջ 364-366, 568-573:

16 Տե՛ս Երեմիա Չելեպի Քէօմիւրճեան, Տեղեաց
տնօրինականաց..., Կ. Պոլիս, 1678:

17 Օրբելեանի Ողբից մէջբերումները՝ ըստ հետե-
ւեալ աղբիւրի. Ստեփանոս Օրբելեան, Ողբ ի Ս.
Կաթողիկէն, հրատ. Կարապետ Կոստանեան,
Թիֆլիս, 1885, էջ 51:

18 Բաղիշեցուց այս եւ հետագայ մէջբերումները՝
ըստ Առաքել Բաղիշեցի, XV դ., աշխատասիրու-
թեամբ Ա. Ղազիմեանի, Երեւան, 1971:

է, որ այն «Հայաստանի ամենապատուական քաղաքն է», որտեղ կան բազում եւ բազմապիսի հմուտ արհեստագործներ¹⁹: Ի թիւս մի շարք գրական ու մշակութային գործիչների, այդ քաղաքից են ժամանակի խոշոր բանաստեղծներ Յովհաննէս Պլուզ եւ Կոստանդին Երզնկացիները: Յովհաննէսը, որ գրել է քաղաքում ստեղծուած «Եղբայրց միութեան» կանոնները, իր համաքաղաքացիներին ուղղուած ամանորեայ շնորհաւորական ուղերձում այսպէս է ներկայացնում իր սիրելի քաղաքը.

«Բրգնայարմար եւ ճոխածեւ հիացական, քաղաք հոյակապ եւ հռչակաւոր, արքայանիստ եւ տիեզերալուր յորջորջեալ եկեղեաց...»²⁰:

Յիշենք նաեւ 1482 թվականին Երզնկայի աւերիչ երկրաշարժի առթիւ գրուած ողբը (հեղինակ՝ Մըսկին Երէց Անուշապկ-ցի), որտեղ խոր ցաւով ու որոշ մանրամասներով պատկերւում է չքեղ քաղաքի կործանումն ու բնակիչների աղետալի վիճակը.

Ջայն գեղեցիկ աղջկունք եւ կին
վայրի եղունքն էին նըման,
գարնանաբեր ծաղկանց նըման
ներքեւ հողին թաղամեցան...

Հագար աւաղ ըզեզընկան՝
մէջ աշխարհիս է Հայաստան,
վանառանաց եւ օթեան...

Բոլոր քաղաքն աւերեցաւ,
ի յանդընդոց երկիր շարժաւ... ²¹

Հայոց հնագոյն քաղաքներից է Ամասիան՝ երբեմնի Փոքր Հայքի, ապա եւ Պոնտական թագաւորութեան կենտրոնը: Այս քաղաքին հայրենի չափով հիւսուած մի

ինքնօրինակ տաղ է ձօնել Մարտիրոս Ղրիմեցին՝ նկարագրելով նրա գեղաշէն կառոյցներն ու փարթամ բնութիւնը.

Ո՛վ դու վայելուչ քաղաք,
լեռնամէջ կառոյց գերակայ,
շինուածք հրաշալի ունիս,
որ անունդ է Ամասիա:

Դղեակդ՝ անառիկ ամրոց,
բարանձաւ լեռանց վերայ կայ,
բարհատ պահարանք գանձուց՝
յօրինեալ ի Միհրդատայ²²:

Ամասիայի հիմնադրման ժամանակներից այնտեղ ապրել են «քաջատուհմ որդիք հայկազնեայ»: Սակայն այդ վայելուչ քաղաքի տէրն այլեւս քաջարի հայկազունները չեն, որոնց ստեղծարար բազկով պիտի շատ աւելի չքեղանար ու բարգաւաճէր այն: Եւ բանաստեղծը փայփայելով այդ երազանքը՝ դիմում է քաղաքին՝ պատկերելով նրա վերակառուցման իր տեսլականը.

Թէ ինձ հըրաման լինե՛ր՝
կապէի կամուրջ քո վերայ
եւ նըշարէնի ծառոց
տերեւով ծածկոյթ սաղարթեայ...

Ներքին շատրվան ծովակ
շինէի սալից մարմարեայ.
յորդառատ աղբերց նըման
խիտ առ խիտ բըխմամբ ցոլանայ...

Բանաստեղծը երազում է նաեւ թուրքական լծի տակ հեծող հնագոյն հայաքաղաքին տեսնել անհոգութեան ու զուարճանքի մէջ եւ այնքան է տարւում այդ բաղձանքով, որ քաղաքին ձօնուած գովերգը վերածում է գինու երգի...

Փոքր Հայքի եւ Պոնտական թագաւորութեան քաղաքներից է եղել նաեւ Եւդոկիա-Թոքաթը, որը 15-16-րդ դարերում

19 Տե՛ս Մարկո Պօլո, Աշխարհի նկարագրութիւնը. Հրաշքների գիրքը, թարգմանութիւնը Արուսեակ Բախչինեան-Գրիմոյի, Երեւան, 2018, էջ 48:

20 Է. Մ. Բաղդասարեան, Յովհաննէս Երզնկացի եւ նրա խրատական արձակը, Եր., 1977, էջ 20:

21 Տ. Պալեան, Հայ աշուղներ, հտ. Ա, Իզմիր, 1911, էջ 108-110:

22 Տե՛ս Ա. Մարտիրոսեան, Մարտիրոս Ղրիմեցի, էջ 131-134:

ապրել է տնտեսական ու կրթական-մշակութային ծաղկուն կեանքով: Սակայն 1602 թուականին ջալալիներն աւերել են այն, եւ քաղաքի բնակիչներին շատերը բռնել են գաղթի ճանապարհով...

Թոխաթցի բազում բանաստեղծներից մէկն է Ղազար Թոխաթցին (1550-1623), որը յօրինել է հայրենի քաղաքին ձօնուած գովերգ ու ողբեր («Գովասանք ի վերայ Թոխաթ քաղաքի», «Ողբ ի վերայ կոտորածին Թոխաթին» եւ «Ողբ ի վերայ սովոյն Թոխաթին»)²³: Առաւել արժէքաւոր է Ղազարի համաքաղաքացի յիշեալ Յակոբ Բաթուկենց Թոխաթցու «Տաղ եւ ողբանք ի վերայ Եւդոկիա քաղաքին» ողբը, որ պատկերում է Թոխաթի առումն ու աւերումը²⁴: Այս բանաստեղծը եւս, հակադրելու համար տխուր ներկան եւ երանելի անցեալը, նախ նկարագրում է աւերուած քաղաքի նախկին բարեշէն վիճակն ու աշխոյժ կեանքը՝ աստիճանաբար մեր առջեւ բացելով Թոխաթի համապատկերը՝ սկսելով քաղաքի գրաւած աշխարհագրական դիրքից.

Վայելչագեղ է նիստ Բոյին.
ի մէջ երկու ձորամիջին
թիկունք տըւեալ ես դու դարին
եւ կու հայիս երես դաշտին:

Ի Բէն բըղխէ շուր աղբերաց,
ի չորս անկիւն Բո տարածած,
անուշահամ ի ծարաւեաց,
առողջամող՝ անդաստանեաց:

Այնուհետեւ ներկայացւում են քաղաքի հրաշագործ եկեղեցիները, «աղէկ» տները, «բարձրապարիսպ» պալատները, չորս ամրոցները, «բարեօք լի» շուկաները, պանդուխտներին պատսպարող իջեւա-

նատները, «գմպէթաճեւ» բաղնիքները, շատրուանները, այգիները եւ այդ ամենը կեանքի կոչող բնակչութիւնը.

Ծեռք եւ տըղայք, կանայք, մանկունք
էին ի Բեգ որպէս ծաղկունք,
պայծառ՝ մարմնով, ուրախ՝ սրտով,
բընաւ չի կայր ի Բեգ աղմուկ:

Եւ ահա, վրա են հասնում աղետները. նախ «սարսելի» սովը, ապա՝ վայրագ ջալալիները, որոնք աւերում են շէն քաղաքը, թալանում են ու պղծում սրբութիւնները, սպանում ու գերեվարում բնակիչներին: Ողջ մնացածները մագապուրծ փախչում են ցիրուցան՝ թողնելով իրենց «զինչսն զամենայն՝ հազիւ զմանկունսն առեալ՝ զերծան»: Եւ հնչում է բանաստեղծի աղեկեղ ողբը.

Թոխաթ Բաղա՛ք աւաղելի,
Բո նոխտփունդ յէ՛ր չ'երեւի,
արդ ես եղեալ դու ամայի
եւ նըշաւակ ամէն ազգի:

Թոխաթցի մէկ այլ շնորհալի բանաստեղծ՝ Ստեփանոսը եւս ողբական բանք է գրել հայրենի քաղաքի առման ու աւերման առթիւ («Ողբ ի վերայ Եւդոկիա մեծի քաղաքին»²⁵): Բանաստեղծն այստեղ կատարում է «պտոյտ մը» Թոխաթի թաղերի մէջ՝ երանութեամբ յիշատակելով մօտ մեկ տասնեակ թաղ՝ իրենց եկեղեցիներով, այլեւ գովերգելով քաղաքի «առաքինի եւ գրակարգաց» եկեղեցականներին ու վաճառականներին...

15-16-րդ դարերում ծաղկուն քաղաք է եղել նաեւ Հայոց հնամենի Ջուղան, որը, սակայն, աւերուել ու գրեթե ամայացել է շահաբասեան ասպատակութիւնների ու բռնազաղթի հետեւանքով (1604-1605): Այդ աղետալի իրողութեան արձագանքն է ժամանակի ողբագիր Յովհաննէս Մակուեցու «Ողբ Հայաստանաց աշխարհի յերե-

²³ Այդ ստեղծագործութիւնների բնագործը յայտնի չեն. այս կապակցութեամբ տե՛ս «Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (XVI-XVII դդ.)», ԲՈՒ. I, էջ 706:

²⁴ Տե՛ս Պ. Խաչատրեան, Հայ միջնադարեան պատմական ողբեր (ԺԴ-ԺԷ դդ.), էջ էջ 264-273:

²⁵ Տե՛ս Առյժ տեղում, էջ 250-263:

լանայ եւ Զուղայու» պատմաողբը: Հեղինակն այստեղ, առաւել ընդգծելու համար կորստի մեծութիւնը, հոյաշէն հայաքաղաքը աւաղելով համարում է «պարծաճ չափաց ազգիս» եւ համեմատում Փարիզի հետ («որ հանցըման էիր քան ըզՓարէզ Յըւանգսիսի»²⁶):

Զուղայի առմանն ու աւերմանն անդրադարձել է նաեւ դարի մեկ այլ ողբագիր՝ Դաւիթ Գեղամեցին²⁷: Ահա նրա պատկերած Զուղան՝ աղետից առաջ.

Ջուղա քաղաքն՝ ազնիւ շինած,
ֆոշ եւ սարայքն՝ բարձրացուցած
եւ գունդգուն ծաղկեցուցած,
նա հիացումն էր տեսողաց:

Եօթն ժամատեղ էր հաստատած,
եկեղեցիքն՝ զարդարած,
բուրվառանին՝ ոսկեջրած,
ծածկոցներն՝ ոսկեթելած...

Մինչդեռ աղետից յետոյ՝ «Ժամատեղին խափանեցաւ, պաշտօնէից ձայնն հատաւ...»:

Աւերուած Զուղային, շատ չանցած, փոխարինել է Նոր Զուղան, որը կարճ ժամանակամիջոցում դարձել է հայկական խոշոր ինքնավար քաղաք: Այստեղ 1610-1670 թուականների ընթացքում կառուցուել են շուրջ մեկ տասնեակ եկեղեցիներ, ինչպէս նաեւ Սուրբ Ամենափրկիչ վանքը... Սակայն Նոր Զուղան եւս, յատկապէս Նաղիւր-Շահի եւ վերջինիս հետեւորդների օրօք ենթարկուել է դաժան կեղեքումների ու աւերածութիւնների: Պարսկահայ կամ Նոր Զուղայի աշուղական դպրոցի նշանաւոր ներկայացուցիչ Բաղեր-Օղլի Ղազարը մի ծաւալուն ներբողական տաղ է նուիրել Նոր Զուղային, որն այդ ժամանակ (1730 թ.) զարգացած արհեստագործութեան եւ

միջազգային առեւտրի շնորհիւ, փարթամ էր ու շէն.

Արհեստով միջի մարդ՝ խոնարհով ան շատ,
խանչորս եկեղեցի, վանքն եւ անապատ,
տէրտէր ու վարդապետ կանգնել հադրեհադ,
նրանց ժամ-պատարագն ընի ետրն Զուղու...

Սովորաբար բանի կայ, դուս գոն նաւերն,
կոշտացնի ֆոռ ու անգալ կաղերն,
գարունք լուսանայ, խոտ գոյ բաղերն,
բացուեն ծաղկումքն զօլարն Զուղու²⁸:

Բայց, ահա, 15-16 տարի անց ներքողագիր աշուղը ստիպուած է եղել գրել խաղեր «վասն աւերածոյ» եւ «վասն նեղութեան Զուղայու»: Անտէր-անտիրական է մնացել երբեմնի մեծահարուստ Նոր Զուղան եւ այնքան է աղքատացել, որ քաղաքի երեխաները փողոցներն ընկած՝ ծախու քար են փնտրում... Նոր Զուղայի աւերածութիւնը պատկերող խաղն ամբողջութեամբ Արարչին ուղղուած աղերսանք-յորդոր է՝ Հայոց վաճառաշահ քաղաքի վերականգնանացման ակնկալիքով:

Ուշ միջնադարում հանդէս եկած ոմն Ստեփան ներբողական տաղ է ձօնել Հայոց հնագոյն մայրաքաղաք Վանին: Տաղի տներն աւարտուում են հետեւեալ ետատողով.

Քաղաք ազնիւ, որ կոչի Վան,
հանդերձ պարոնայք եւ իշխանք,
պահէ Տէրն իմ միշտ անսասան²⁹:

Տաղասացը գովերգում է Վանի փարթամ բնութիւնը, նրա եւ շրջապատի սքանչելի վանքերն ու եկեղեցիները, յատկապէս՝ առաքինի բնակիչներին.

26 Տե՛ս նոյն տեղում, էջ 278:

27 «Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (XVI-XVII դդ.)», հտ. II, էջ 48:

28 Այս եւ միւս աշուղներից կատարուած մէջբերումները՝ ըստ հետեւի աղբիւրի. «Հայ աշուղներ. XVII-XVIII դդ.», կազմող Հ. Սահակեան, Երեւան, 1961:

29 «Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (XVI-XVII դդ.)», հտ. II, էջ 634-3-636:

Ի ծովակին Վասպուրական,
ծաղկաւտ լերին՝ զանազան,
սփանչելի աւազ Սուրբ Նշան...

Սա է ֆաղաֆ յոյժ գեղեցիկ,
կանանչախիտ ծաղկեալ այգիք,
փարեւ ի մէջ տըղայ մանկտիք...

Տեսի գփաղաֆս յոյժ գեղեցիկ,
զոր ինչ Աստուած ետ մեզ բարիք,
մարդիկն ամէն՝ առաքինիք...

16-րդ դարի մի անանուն հեղինակ
ողբ է հիւսել՝ նուիրուած «Վանայ պա-
տուական երկրի» ծաղկուն ու շէն քաղաք-
ներին, որոնք թշնամու սրի ճարակ էին
դարձել: Բերենք Ողբի հետեւեալ տողերը.

Վանայ պատուական երկիրն շինութիւն բնաւ ոչ
թողին,
ո՛չ գեղ, ո՛չ ֆաղաֆ ասին, զամենայն հրոսկ
այրեցին:
Արճէշ շատ արին արին, զվանորայքն ամէն
բակեցին,

Սուսերն ի ձեռներն առին, զմիաբանքն ամէն
սպանեցին:
ԶԽըլաթ՝ Արծկէ ողբամ, որ զայգիքն ամէն
կըտեցին,
այլ եւ Տարօնոյ երկիրն արտորայքն ամէն այրեցին:
Ողբամ գփասեմոյ երկիրն, որ հըրձիգ ըզնա
արարին,
եւ Կարմոյ մինչեւ ի Սիս գփստոնեայքն ամէն
փախուցին...³⁰:

Միջնադարեան բանաստեղծները հայ-
րենի քաղաքները ներկայացրել են ոչ
միայն գովերգով ու ողբերգով. նրանք եր-
բեմն դիմել են նաեւ զաւեշտին: Այսպէս,
Նաղաշ Յովնաթանը (166--1722) իր «Գո-
վասանութիւն երեւանայ քաղաքին» եր-
գիծական տաղում բաւական սրամտօրէն
«գովաբանում է» աղտեղութեան մէջ կո-

րած, 17-րդ դարի աղքատիկ գաւառաքա-
ղաք Երեւանը³¹...

Միջնադարեան բանաստեղծութեան
մէջ բազմիցս յիշատակուել ու պատկե-
րուել են նաեւ հայկական գաղթավայրերի
քաղաքները: Դրանց մէջ թերեւս առաջնա-
գոյնն է Կոստանդնուպոլիսը: Ինչպէս տե-
սանք, Ներսէս Շնորհալին իր Ողբում Ժա-
մանակի խոշոր քրիստոնէական քաղաքնե-
րի շարքում անձնաւորել է նաեւ Կոս-
տանդնուպոլիսին, որին եւս եղբրամայր Ե-
ղեսիան աղաչում է վրէժխնդիր լինել...

Վերելում յիշատակեցինք նաեւ Առա-
քել Բաղիշեցու «Ողբ մայրաքաղաքին
Ստամպոլոյ» պատմական բանքը, գրուած
1453 թվականին՝ թուրքական հորդաների
ասպատակմամբ Կոստանդնուպոլիսի առ-
ման եւ աւերման առթիւ: Մեծարժէք այս
երկը բովանդակում է աւերուած քաղաքի
ողբը, այլեւ Կոստանդնուպոլիսի եւ առհա-
սարակ բոլոր քրիստոնեայ ժողովուրդների
ազատագրութեան վերաբերեալ հեղինակի
խոհերն ու տենչերը:

Բիւզանդիայի մայրաքաղաքը ժամա-
նակի քրիստոնեայ աշխարհի խոշորագոյն
կենտրոնն էր, որտեղ գումարուել էին ընդ-
հանրական եկեղեցու երեք նշանաւոր տիե-
զերական ժողովները, գործել էին խոշոր
տաճարներ, հանդէս էին եկել եկեղեցու
հայրերը... Ուստի եւ «քրիստոնեայ քաղա-
քակրթութեան սիրտը ներկայացնող դիւ-
թական ու մեծաշուք Քաղաքի» (Արշակ
Չոպանեան) անկումն այլապէս ու վայրագ
թուրքերի հարուածներից ծանրագոյնս
ցնցել է աշխարհի բոլոր քրիստոնեաներին,
առաւել եւս հայութեանը, որ հեծում էր
մուսուլման ցեղերի բռնութեան տակ:

Առաքել Բաղիշեցին վարպետօրէն
հիւսած իր աշխարհակոծ ողբին հրաւիրում
է մասնակցելու նաեւ Կոստանդնուպոլիսի

30 Պ. Խաչատրեան, Հայ միջնադարեան պատմա-
կան ողբեր (ԺԴ-ԺԷ դդ.), էջ 226-227:

31 Տե՛ս Նաղաշ Յովնաթան, Բանաստեղծութիւն-
ներ, Երեւան, 1951, էջ 99-100:

փառաւոր անցեալում հանդէս եկած Եկեղեցու հայրերին, մասնաւորապէս Պոլսոյ հռչակաւոր պատրիարք Յովհան Ոսկեբերանին («արի եւ տե՛ս դու Ստամպոլ եւ վա՛յ կարգա՛ք Սթոռոյդ»):

Դիմելով աստուածաբան սուրբ հայրապետներին, որոնք ժամանակին օրհնաբանել են Կոստանդնուպոլիսը, ողբերգուն առաջարկում է օրհնանքը փոխարինել անէծքով, քանզի սրբազան քաղաքում արդէն «փոխան ժամուն եւ զանգակին... նամազ կարդան»:

Կոստանդնուպոլիսը եղել է նաեւ հզօր կայսրութեան մայրաքաղաք, «փառք ծովու եւ ցամաքի», ուստի եւ նրա անկումը «ողբում է» նաեւ քաղաքի հիմնադիր կայսր Կոստանդինոս Մեծը, որի ողբին բանաստեղծը հրաւիրում է մասնակցել նաեւ բիւզանդական ու հռոմէական կայսրերին...

Ողբերգուն դիմում է նաեւ կործանուած քաղաքին՝ անձնաւորելով նրան, որպէս զոհուած հարազատի, անվերջ աւաղումով կրկնում նրա անունը, մե՛րթ հին, մե՛րթ նոր յորժորջմամբ, եւ այդ կրկնութիւններն առաւել մեծացնում են ողբի յուզական լիցքը, դարձնում այն ազդեցիկ ու վարակիչ:

Բիւզանդիա, Բիւզանդիա, Ստամպոլ քաղա՛ք,
Բիւզանդիա,

Կոստանդինու պոլիս կոչեալ, արեամբ լըցեալ,
Բիւզանդիա...

Ժամանակի մեկ այլ բանաստեղծ՝ Աբրահամ Անկիւրացին եւս Կոստանդնուպոլիսի առման եւ աւերման առթիւ գրել է մի արժէքաւոր պատմական ողբ («Ողբ ի վերայ առման Կոստանդնուպոլսոյ»³²): Նա մանրամասն արձանագրել է պատմական փաստերը՝ սկսելով թուրքերի ռազմական գործողութիւնների նախապատրաստութիւ-

նից եւ աւարտելով քաղաքի անկմանը յաջորդած որոշ դէպքերի նկարագրութեամբ...

17-րդ դարի նշանաւոր բանաստեղծ Երեմիա Չելեպի Քէօմիւրճեանը, որին յիշեցինք վերելում, իր «Պատմութիւն համառօտ Դժ տարւոյ օսմանցոց թագաւորացն» պատմական երկում³³, բնականաբար, անդրադարձել է Կոստանդնուպոլիսի առմանը: Այստեղ նա դառնօրէն ողբում է, քանզի բարբարոսների ձեռքն անցած այդ քաղաքը եղել է «նախկին տուն հաւատոյ», «անդրանիկ ի կրօն՝ Լ ի կարգն»: Նա նախ գովերգում է Պոլիսը, համեմատում Արեւելքի ու Արեւմուտքի բոլոր նշանաւոր քաղաքների հետ եւ գերադասում է այն թէ՛ որպէս քրիստոնէութեան բնօրրան ու կրթական կենտրոն եւ թէ՛ որպէս «յաղթող եւ պերճ» Բիւզանդական կայսրութեան հռչակաւոր մայրաքաղաք: Քէօմիւրճեանն, անշուշտ, Բիւզանդիայի մէջ տեսել է նաեւ հայութեան պատուարին, ուստի եւ վերջինիս խորտակումն անչափ ցաւալի է նրա համար: Վայ տալով կործանուած Բիւզանդիային՝ նա ասում է.

Զիմաստութիւնդ ֆռանկն էաւ,
ըգտելէթըդ տանիկ ապուեալ:

Այսինքն՝ իմաստութիւնդ եւրոպացին վերցրեց, հարստութիւնդ թուրքը թալանեց:

Քէօմիւրճեանի լաւագոյն երկերից է նաեւ «Ստամպոլոյ պատմութիւնը»³⁴: Սա պատմական-գեղարուեստական բնոյթի ընդարձակ Յակոբ (հայրենի չափով) տեղագրութիւն է, որտեղ պատկերուած է ժամանակի Պոլիսն՝ իր սոցիալ-տնտեսական կեանքով, կենցաղով, սովորոյթներով, էթ-

32 Տե՛ս Հ. Աճաւեան, Հայկական աղբիւրները Բիւզանդիայի անկման մասին, Եր., 1957, էջ 35-55:

33 Տե՛ս Երեմիա Քէօմիւրճեան, Պատմութիւն համառօտ Դժ տարւոյ օսմանցոց թագաւորացն, աշխատասիրութեամբ Ժ. Աւետիսեանի, Երեւան, 1982 (մէջբերումներն՝ այստեղից):

34 Տե՛ս Երեմիա Քէօմիւրճեան, Ստամպոլոյ պատմութիւն, հրատ. Վ. Թորգոմեանի, հտ. Ա, Վիեննա, 1913 (մէջբերումներն՝ այստեղից), հտ. Բ, 1932, հտ. Գ, 1938:

նրկական կազմով, մեծ ու փոքր կառույցներով: Տպաւորիչ են յատկապէս Պոլսի շրջակայ բնութեան նկարագրութիւնները...

Քէօմիւրճեանի ժամանակակից տաղասաց վարդապետ Յակոբ Սսեցին լինելով Կոստանդնուպոլսում՝ գրել է մի տաղ, որտեղ նկարագրելով քաղաքի եկեղեցիները, այժմ դարձեալ մզկիթի վերածուած Սուրբ Սոփիա տաճարի մասին ցաւով ասում է.

Այեայ Սոփին այժմ տանկաց ճամին է,
փոխանակ զանգակին՝ մէզինէր կանչէ...³⁵:

Ի դեպ, իր մի թուրքերէն խաղում Սալաթ-Նովան եւս յիշատակել է Ստամբուլը, Այա Սոփիան, այլեւ Փադիշահի գահ-սուլթանական պալատը.

Մայրաքաղաք Ստամբուլի գովքն են անում.

Փադիշահի գահի մօտ է Այա-Սոփիան³⁶:

Մեկ այլ խաղում էլ Սալաթ-Նովան յիշատակել է նաեւ Թուրքիայի Բուրսա քաղաքն ու նրա զբօսայգին («Լաւ սազում է Բուրսայի զբօսայգուն՝ տարին յոթ անգամ պտուղ տվող ծառը»):

18-րդ դարի խոշոր բանաստեղծ Պետրոս Ղափանցին Բիւզանդիոն-Կոստանդնուպոլսին ձօնել է տաղեր³⁷, որոնցից մեկը խորագրել «Զգարնան է Բիւզանդիոյ, որ խորհրդաբար ակնարկի առ բնակիչս նորին»։ Այսինքն՝ հայաքաղաք Կոստանդնուպոլիսը խորհրդանշում է հայրենիքն ու ժողովրդին: Հետեւաբար, բանաստեղծը վերջինիս դիմում է ինչպէս իր վարդ-հայ-

րենիքին, որի ազատագրումն օսմանեան բռնատիրութիւնից դիտել է իր հայրենիքի ազատագրման համատեքստում.

Ըզեզ՝ խորշակ, զիս կարօտ քո շարշարէ,
գօրէն ծովուց զայս կոյս, զայն կոյս հարհարէ...

Գարնան արեւ եւ շաղաբեր առաւօտ,
խաւարացիր հո՛ւ՛ գովարար, հետագօտ,
տապ եւ խորշակն եղեն արդէն մահամօտ.
բացի՛ր, բացի՛ր, իմ կարմիր վա՛րդ աննըման,
գեղըդ՝ նըման արեգական վառ, վառման:

Պոլսի, որպէս հայութեան դարաւոր պատմամշակութային օրրանի եւ հոգեւոր հայրենիքի մի մասի, այսօրինակ այլաբանական եւ ջերմ քնարական պատկերումը նորութիւն էր մեր գրականութեան մէջ:

Կոստանդնուպոլսի 1778 թուականին երկրաշարժի աւերածութիւններին ողբական տաղերով անդրադարձել են ժամանակի աշուղներ Օհան-Օղլին եւ Ճերեան-Օղլու Մինասը: Բերենք երկու տուն վերջինիս տաղից.

Եղբա՛ւր, ասեմ ձեզի բան մի խրդնալի.
անշափելի սըզով լըցաւ ըՍտամպօլ,
Աստուած մեր մեղացըն խլոռ նայեցաւ,
բաղաֆն հիմէն շարժեցաւ ըՍտամպօլ:

Ո՛վ էր տեսեր այսպէս սփանջելի բաներ,
ըՍտամպօլ չի մընաց քարաշէն խաներ,
շատ վընարանֆ փըլաւ, շատ անթիւ տըներ,
յանկարծակի աւեր դարձաւ ըՍտամպօլ:

15-17-րդ դարում աշխոյժ կրթական-մշակութային կեանքով էր ապրում «Ծովային Հայաստան» կամ «Վերին Հայք» կոչուած Ղրիմի գաղթօջախը, յատկապէս նրա կենտրոն Կաֆան (Թէոդոսիա):

1475 թուականին թուրքերը գրաւել ու աւերել են այս ծաղկուն հայաքաղաքը. այդ առթիւ մի յիշատակարանային-ողբական բանք է հիւսել կաֆացի ողբագիր-տաղասաց Ներսէսը («Ողբ մայրաքաղա-

35 Ա. Սիրմէեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի Ս. Քառասուն մանկունք եկեղեցւոյ եւ մասնատրաց, Երուսաղէմ, 1935, էջ 382:

36 Սայաթ-Նովան խաղերից այս եւ հետագայ մէջ-բերումները մեր «Սայաթ-Նովայի բանաստեղծական ժառանգութիւնը» աշխատութիւնից եմ (Երեւան, 2016, էջ 357):

37 Տե՛ս Ծ. Նազարեան, Պետրոս Ղափանցի, Երեւան, 1969, էջ 275-290:

քին Կաֆայու»), որն արժեքաւոր է յատկապէս իբրեւ սկզբնաղբիւր³⁸...

16-րդ դարի իր 1583-1584 թուականներին Ղրիմում ծաւալուած ռազմա-քաղաքական անցուդարձերը եւ Կաֆայի նոր աւերումը թուրքական ասպատակութեամբ նկարագրել է ժամանակի տաղասաց Յովհաննէսը «Ողբ ի վերայ առման Կաֆայի» պատմաողբում³⁹...

1560 թուականին Կաֆան եւ նրա շրջակայքն ամայեցրած ահաւոր սովի առթիւ անուանի տաղասաց Վրթանես Սոնկեցին գրել է «Ի վերայ Կաֆայու սղութեան» բանքը՝ սարսափով արձանագրելով Ղրիմի ծաղկուն ու շէն քաղաքում սովի կատարած աւերածութիւնները, որոնց միացել էին թալանն ու կողոպուտը⁴⁰:

16-րդ դարի մեկ այլ անուանի բանաստեղծ՝ Մարտիրոս Խարասարցին, երկար ժամանակ ապրելով Կաֆայում, մի գովերգ է ձօնել այդ քաղաքին⁴¹ իւրաքանչիւր տունն աւարտելով «Աստուած թող շէն պահէ զԿաֆայ» մաղթանքով, որ նաեւ տաղի սկզբնատողն է: Նման կառուցուածքը բնորոշ է տաղասացի բանարուեստին: Նա մեր առջեւ բացում է Ղրիմի այդ վաճառաշահ քաղաքի պատկերը՝ բարոք կեանքով ապրող իր բնակիչներով:

Բոլոր պարիսպն, որ ի նմա կայ,
գերահընչակ անուն նորա...

Դռներն ամուր, որ ի նըմա,
եկեղեցիքն՝ գերակայ,
զանգակներուն ձայնքն կու գայ:
Աստուած թող շէն պահէ զԿաֆայ:

Ճոխայ ամէն մարդ եւ խընդայ,
մանուկ եւ մեծ եւ երեխայ,
յերեսնուն լոյս թափեալ՝ ցոլայ:
Աստուած թող շէն պահէ զԿաֆայ:

Նաւն ի ծովէն շատ բարեօք գայ,
շուրջ վանեօքն ուրախանայ,
որդիք մարդկան ի յուխտ կ'երթայ
Աստուած թող շէն պահէ զԿաֆայ:

Տաղասացը գոհունակութեամբ է նշում, որ

Հայոց տուն է այժմ Կաֆայ՝
ձայնն ընդհանուր յերկիր կերթայ:

Ծնունդով Կաֆայից էր Մարտիրոս Ղրիմեցին, որի արժեքաւոր գործերից է վերը յիշատակուած «Պատմութիւն Ղրիմայ յերկրի» Յակոբ երկը: Այստեղ նա վկայել է, որ Անիի կործանումից յետոյ (1331) հազարաւոր հայեր հաստատուել են Ղրիմի թերակղզում եւ «Ի Կաֆայ կացին սեպհական»:

Մարտիրոս Ղրիմեցին եւս, ինչպէս ժամանակին Ներսէս Կաֆացին, դառնագին ողբացել է 1475-ին թուրքական ասպատակմամբ Կաֆայի առումն ու աւերումը:

Աստանօր ի պատմել նաոն անկարանամ,
բանգի նըմի սիրտ իմ եղեալ ի դողման:
գիւրդ կարայց հիսել զբանս աւաղական
ի վերայ Կաֆայու բաղաբին առման:

Շրջապատեալ եղեն գիւղաբն ամենայն
այլասեռ թըշնամիք՝ ծարալիք արեան,
կըրնտեալ ատամամբք իբրը զչար գազան՝
գիշատել ըզգառինս գայլօրէն սպառնան...

Ամրոց կարծեալ պարիսպն, յոր մեք ապաստան,
հարեալ աւերեցին իսպառակործան⁴²:

Թոխաթի աւերումից յետոյ Կաֆայում հաստատուած Ստեփանոս Թոխաթցին իր յիշեալ «Ողբ ի վերայ եւդոկիա մեծի քաղաքին» երկի վերջում հարկ է

38 Ողբը հրատարակել են Ն. Ծովակեանը «Սիոն»ում (1946, էջ 163-164) եւ Յ. Քիրտեանը՝ «Բազմաւէտ»ում (1957, էջ 83-84):

39 Տե՛ս Պ. Խաչատրեան, Հայ միջնադարեան պատմական ողբեր (ԺԴ-ԺԷ դդ.), էջ 132-136:

40 Տե՛ս «Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (XVI-XVII դդ.)», հտ. I, 239-241:

41 Տե՛ս Նոյն տեղում, էջ 170-172:

42 Ա. Մարտիրոսեան, Մարտիրոս Ղրիմեցի, Երեւան, 1958, էջ 149:

Համարել գովաբանել Կաֆան, որն իր հիւրընկալ դռներն էր բացել նոր տարագիր Հայերի առջեւ.

Կաֆա ֆաղաֆ նըման դրախտի
'ի յերուսաղէմ սուրբ ֆաղաֆի,
մեծ Հըռոմայ 'ի ըստամպոլի,
Շամայ, Համթայ 'ի եգիպտոսի:

Ամուր պարիսպ շուրջանակի,
բերդ մ'այլ ի մէջն ֆրոանկի,
նաւըն բերէ հազար բարի,
ծրկումն ելնէ ազգի-ազգի:

Վանֆեր բազում 'ի եկեղեցի,
հովըն շրջէ ըզաղջընի,
տանաւ՝ նըման Սողոմոնի,
նաեւ հանգոյն սուրբ Սիոնի⁴³:

Իր մեկ այլ գործում Ստեփանոս Թոխաթցին գովերգում է Կաֆայի Հայկական եկեղեցիների սպասաւորներին⁴⁴...

Ղրիմի մի շարք Հայկական եկեղեցիներին ու վանքերին գովերգեր ձօնած Վարդան Կաֆացին (1615-1712) Հեղինակել է նաեւ «Օրհնութիւն ի վերայ Կաֆայու» վերտառութեամբ մի տաղ⁴⁵, որտեղ ոչ թէ նկարագրում ու ներբողում է իր ծննդավայր Կաֆան, այլ ջերմեռանդօրէն աղօթում է տեղի Հայութեան Համար...

Ժամանակի բանաստեղծութեան մէջ յիշատակուած ու գովերգուած են նաեւ Ղրիմի այլ Հայաշատ քաղաքներ, ինչպէս՝ Սուրխաթը, Ղարասուն, Բախչիսարայը, Կեզլովը: Վերոյիշեալ տաղասաց Յակոբ Սսեցին որոշ ժամանակ լինելով Ղրիմում, նկարագրել է նաեւ Հայաշատ Ղարասուն՝ իւրօրինակ ձեւով պատկերելով քաղաքի

բնութիւնը, կառոյցները, Հայկական եկեղեցիներն ու Հայ հոգեւորականներին⁴⁶...

Յիշենք նաեւ Վարդան Կաֆացու այն տաղը, որտեղ բանաստեղծը դիմելով Ղրիմի Սուրբ Խաչ վանքին ասում է.

Դու ես ապաստան Ղրիմու Կաֆայի,
Ղարասու կոչեալ բուրաստանօք լի,
այլ՝ արֆայանիստ Պանչիսարայի,
դաշտածեւ յերկրին օրհնեալ Կեզլովի,
այլ եւ՝ շրջակայ մօտ գեղօրէի,
գլուխ ես կարգեալ եւ վանորէի,
պահապան կենաս ամենայն երկրի...⁴⁷:

Ինչպէս «Հայոց տուն» է Համարուել Կաֆան, այնպէս էլ «Հայոց քաղաք» է Համարուել ու Հանդիսացել Թիֆլիսը: Նկարագրելով այս քաղաքը, Ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Շարդէնն իր Հիացմունքն է յայտնել տեղի բնակչութեան բարետեսութեան մասին. «Այստեղ ես հետեւաւ ոչ մի տեղի դէմք, ինչպէս կանանց, այնպէս էլ տղամարդկանց մէջ»⁴⁸:

Նոյն այդ ժամանակ է Նաղաշ Յովնաթանը գրել «Ի վերայ Գուրջստանայ գօղաներին» Հանրայայտ գովերգական տաղը, որտեղ կարդում ենք.

Գովեմ սըրաի ուրախական
Թիֆլիզ ֆաղաֆըն պատուական.
Խիստ գեղեցիկ են, սիրական
Վըրաստանայ գօղաներն...
շեն Թիֆլիզի թաւաղներն...⁴⁹

Հայոց երգն ու երաժշտութիւնն ինքնատիպօրէն զարգացրած այդ քաղաքը ծնել է մի շարք բանաստեղծների եւ աշուղների, այդ թւում անգուգական Սալթ-Նովային, որն ինքը վկայել է.

43 Տե՛ս Պ. Խաչատրեան, Հայ միջնադարեան պատմական ողբեր (ԺԴ-ԺԷ դդ.), էջ էջ 262:

44 Տե՛ս «Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (XVI-XVII դդ.)», հտ. I, էջ 511-516:

45 Տե՛ս Անյն տեղում, հտ. II, էջ 157-162:

46 Տե՛ս Անյն տեղում, էջ 273-276:

47 Նոյն տեղում, էջ 168-169:

48 Полиевктов М., Натадзе Г., Старый Тифлис в известиях современников, Тифлис, 1929, с. 68.

49 Նաղաշ Յովնաթան, Բանաստեղծութիւններ, էջ 11:

«Մենդավայրս Թիֆլիսն է՝ Վրաստան երկրում»։ Մեկ այլ խաղում էլ ասել է.

Վրաստան երկրում, Թիֆլիս քաղաքում
Սայաթ-Նովային սիրո ընկեր են ասում:

Երգչի խաղերում առկայ են նաեւ որոշ յիշատակումներ Թիֆլիսի թաղամասերի (Մէյդան, Իսանի Հաւաքար) ու բնակիչների վերաբերեալ («Թիֆլիսեցիները խօսքեր գիտեն ճարտար»): Մի խաղ էլ նուիրել է Թիֆլիսի Մողնի թաղի վերանորոգուած եկեղեցուն... Առհասարակ, Սայաթ-Նովայի եռալեզու ստեղծագործութիւնը Թիֆլիսի, նրա բարբառի, բառ ու բանի ու մթնոլորտի իւրօրինակ անդրադարձն է:

Յիշենք նաեւ Սայաթ-Նովայից յետոյ Հանդէս եկած աշուղ Շամչի Մելքոյի (Գուլքանեանց) այն դաստանը, որտեղ նկարագրուած է 1795 թուականին Աղա-Մահմադի արշաւանքի ժամանակ Թիֆլիսի առումն ու աւերումը.

Քաղաքը որ ներս էկաւ հարիւր հազար զըզըլքաշը,
մէկ մէկումէն ջոգեցին ողջ մէտի դօհում զարդաշը,
հահաններուն շունն էր ուտում, ոչ մինը չըմըտաւ

նաշը,

գիտի պէս արիւն էր գընում, բօստան էր արմորդու
լաշը.

որդին մօրիցն էին խըլում, էր սուգ ու շիվան
քաղաքիս:

Դառնօրէն ողբալով հայրենի քաղաքի կործանումը, աշուղն արտայայտում է նաեւ իր ցաւը, ափսոսանքն ու զայրոյթը: Ահա, թէ ինչ երանութեամբ է նա յիշում երբեմնի շէն մայրաքաղաքը՝ մի քանի տողով վերականգնացնելով կենսութեալս հին Թիֆլիսը.

Ո՛ր ին քաղքի ջոգած տըղերքն, որ դաստերով ման
գումէին,

մէկ մէկու աղպէր ասելով՝ տես ի՛նչ սէրով ման
գումէին,

էթխոտա աղայ մարդիքը շախշուրներով ման
գումէին,

ով որ կարողութիւն ունէր՝ նոքարներով ման

գումէին,

նըրանցմէն մէկն էլ չիմ տեսնում հիմի մէ նըշան
քաղաքիս:

Միջնադարում հարաւարեւելեան եւրոպայում հաստատուած հայութեան խոշոր կենտրոններ են եղել Կամենիցը (Կամենեց-Պոդոլսկ) եւ Լվովը (Լեմբերգ): Առաջինի վերաբերեալ մի անանուն տաղասաց, այդ հայկական գործուն օջախի ինքնութեան պահպանման բաղձանքով, հիւսել է մի բաւական տպաւորիչ տաղ, որ հարկ ենք համարում բերել ամբողջութեամբ.

Ո՛վ աստուածապահ քաղաքդ մեծ՝ Կամենից,
ի քառից կողմանց պատեալ յորդանոս վըտակից,
անառիկ ամրոց շինեալ ի վերայ վիմի,
օրհնութիւն աստուծային ի քեզ ծաւալի:

Ազգ հայկազեան զարմի, որ ի քեզ բնակի,
հաստատեալ յուսով, սիրով սուրբ Լուսաւորչի,
պահեսցէ Տէր հաստատում եւ անշարժելի,
պայծառ, լուսաւոր դիմօք եւ անդրդողելի,
սրգոյապատիւ պերճմամբ բարգաւանելի,
շքեղազարդութեամբ փայլեալ, որ կան ի մարմնի:

Տիրամայր ամենասուրբ Աստուծածին,
բարեխօսեա՛ Միածնի՛ վասն այս քաղաքի,
մանաւանդ՝ փոքրիկ հօտի հայկական զարմի,
որ կան հաստատեալ սիրով Փըրկչին Յիսուսի⁵⁰:

Յիշատակելի է նաեւ Լվովին ձօնուած տաղը⁵¹, որ հեղինակել է 16-րդ դարի հայ բանաստեղծութեան նշանաւոր դէմքերից մեկը՝ Մինաս Թոխաթցին (ծն. 1510):

Թոխաթցի մեկ այլ տաղասաց՝ Խաչատուրը, հայրենի քաղաքի աւերումից յետոյ անցել է Կոստանդնուպոլիս, ապա Կաֆա եւ այնուհետեւ յայտնուել է Վենետիկում: 1614-ին նա «ի վերայ ծովու եւ ի մէջ նաւի» գրել է «Պատմութիւն Վենետիկ

50 Ղ. Ալիշան, Կամենից, Վենետիկ, 1896, էջ 184:

51 Տե՛ս «Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (XVI-XVII դդ.)», հտ. I, էջ 460-462:

քաղաքին» չափածոյ ուղեգրութիւնը⁵², որն այդ ժանրի առաջին նմուշն է հայ բանաստեղծութեան մէջ: Այստեղ հեղինակը յաճախ գրաւիչ պատկերներով եւ անմիջականութեամբ նկարագրում է եւրոպական այդ մեծահամբաւ քաղաքը, նրա կառոյցները, բնակիչներին, նրանց նիստուկացը: Այս հայրենասէր հայի համար, որի հայրենիքը դարեր ի վեր պարբերաբար աներուել է ու հեղուել իր ժողովրդի արեամբ, զարմանալի ու նախանձելի է եղել այն, որ՝

հագար՝ Է երկու հարիւր տարի,
որ վեցնետիկըմ շինեալ կայ,
չարկամաց ձեռք խկի չ'անկեր,
եւ ոչ կըրակ հըրդեհեր գնա:

Զինչ որ ունի վաղուց հետէ
եւ ի պապանց մընացեալ կայ,
ամէն տարի կու յաւելնայ,
եւ ոչ մէկ փող կու պակասէ:

Վենետիկցիների սովորոյթների եւ ապրելակերպի որոշ կողմեր մեր ուղեգիրբանաստեղծի համար ծիծաղելի եւ անընդունելի են եղել, սակայն, ընդհանուր առմամբ, նա հակամէտ է եղել դեպի եւրոպական քաղաքակրթութիւնը, որը գովերգելով՝ ըստ էութեան, փայփայել է իր ժողովրդի զարգացման ու լուսաւորման գաղափարը:

Խաչատուր Թոխաթցուց յետոյ գրուել են նաեւ այլ ուղեգրական բնոյթի տաղեր, որոնց մէջ հեղինակները նկարագրում են իրենց տեսած բնակավայրերը, արտայայտում դրանց թողած տպաւորութիւնը: Այսպէս, գրիչ-տաղասաց Մինասն իր մի տաղում համառօտակի ներկայացրել է 1634 թուականին իր ուղեւորութիւնը դէպի Եւրոպա՝ յատկապէս անդրադառնալով Բելգրադին: Նա հետեւեալ կերպ է գովեր-

գում այդ լիառատ, բայց եւ աղքատաշատ քաղաքը.

Ամէն դիմաց գովեալ է սա,
առատութեամբ բարիքն ի սմա,
խիստ աղքատաց տեղիք էր սա,
գոր եւ տեսաք աշօք մեր սա:

Այլ յիսնակաց տեղիք էր սա,
Դանոբ գետովն լըցեալ էր սա,
եւս առաւել ձուկն, որ ի սմա...⁵³:

Յիշատակելի են նաեւ որոշ քաղաքների վերաբերեալ գրուած պարսաւական տաղերը: Նման տաղերով, ահա, Մարտիրոս Ղրիմեցին փնովել է Ահեռլ (Ախելոյ) եւ Պուրղազ (Բուրգաս) քաղաքները, որոնք անհիւրընկալ եւ անողորմ են եղել տարագիր հայութեան հանդէպ, եւ նրանց բնակիչները «չար եւ դժնդակ» են, «անգութ եւ օտարատեաց» եւ չունեն «բարութեան նշան»⁵⁴: Յաւելենք նաեւ, որ Ղրիմեցին հայատառ թուրքերէն պարսաւական-երգիծական տաղեր է գրել՝ նուիրում Ռումինիայի Բաբադաղ (Բաբադազ, այժմ՝ Տուլչեա շրջանում) քաղաքին եւ Վառնայի բաղնիքներին⁵⁵...

Նոր Զուղայի աշուղական դպրոցի նշանաւոր ներկայացուցիչ Ղուկ Արզունին, որ երկար ժամանակ ապրել է Հնդկաստանում, իր երգերից մեկում պատկերել է բարոյապէս քայքայուած ու այլասերուած կալկաթան՝ ցաւով նշելով նաեւ տեղի հայութեան արատաւորութիւնը...

Միջնադարեան բանաստեղծները քաղաքը, բացի խորհրդանշական իմաստաւորումից, կիրառել են նաեւ այլաբերական տարրեր կիրառումներով: Այսպէս, անտիկ աշխարհի խոշոր կրթական-լուսաւորական կենտրոն Աթէնքը փոխաբերուել է իբրեւ

53 «Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (XVI-XVII դդ.)», հտ. II, էջ 311-312:

54 Տե՛ս Ա. Մարտիրոսեան, Մարտիրոս Ղրիմեցի, Երեւան, 1958, էջ 110-111:

55 Տե՛ս Առյճ տեղում էջ 64:

52 Տե՛ս «Պատմութիւն Փարէզի եւ Վեննայի, Պատմութիւն Վենետիկ քաղաքի», աշխատասիրութեամբ Կ. Մելիք-Օհանջանեանի, Երեւան, 1966, էջ 238 էջ 253-286:

կրթութեան օրրան, ինչպէս, օրինակ, Ներսէս Շնորհալու «Վիպասանութիւն» պատմական բանքի հետեւեալ տողերում.

Ձեմ տակալին ներկուտ բանի.

յԱթենականըն Բաղաֆի...

Յաթենացոց Բաղաֆն երթեալ,

զիմաստութեան ծաղիկս առեալ...⁵⁶

Ուշագրաւ է նաեւ քաղաքի հետեւեալ այլաբերական կիրառումը, որ բխում է 13-րդ դարի նշանաւոր բանաստեղծ Յովհաննէս Պոլոզ Երզնկացու (վախճ. 1293)՝ հոգու եւ մարմնի հակամարտութեան վերաբերեալ հայեցակարգից: Իր «Երկուսն ի մէկ տեղ բերած» բանքում նա մարդկային մարմինն այլաբերել է իբրեւ ամուր բերդ, որտեղ պահուում է հոգին իբրեւ գանձ. այդ բերդի հինգ դռները մարդու հինգ զգայարաններն են, որոնք պիտի փակ պահել, որ գողը (սատանան) եւ չարկամները (գայթակղութիւնները) չմտնեն եւ չգողանան գանձը: Մեկ այլ բանքում բանաստեղծն այն միտքն է յայտնում, թէ. «քաղաք առանց պարիսպ՝ հեծելի կոխ է», իսկ մեկ այլ տեղ, խրատելով աղամորդուն, ասում է. Արարիչը «երկու ականջ քեզ յօրինեաց, զերթ դուռն քաղքի»⁵⁷:

Յովհաննէս Պոլոզի նշուած այլաբերութեան հիման վրա 16-րդ դարի բանաստեղծ Յովասափ Սեբաստացին իր մի քերթուածում պատկերում է մարդու մարմին-քաղաքի երկու տարբերակ, որոնցից մեկի դռները բաց են, միւսինը փակուած են գող-չարկամների առաջ.

Մարդ է ի Բաղաֆ նըման.

պարսպած է անառական.

հինգ դուռն է այս Բաղաֆիս
զգայարանի, որ բաց կու կենան:

Ջարկամըն այս Բաղաֆիս
սատանայ է, գող բընական,
զոր դուռ որ ի բաց գըտնու,
գողանայ զգանձըս հոգեկան:

Այլ Բաղաֆ տեսայ ամուր.
մէջըն գանձ էր անմահական.
հինգ դուռն ամուր էր փակած,
եւ շարկամին ի դէմ կու դողան⁵⁸...

Այս նոյն տրամաբանութեամբ է հիւսուած նաեւ Պաղտասար Դպիրի այն տաղը, որտեղ հեղինակը մեղքերից քայքայուած իր անձը ներկայացնում է «ի թշնամեաց պատերազմէն» աւերուած քաղաքի փոխաբերութեամբ.

Հիմունի՛ նորին Բայբայեցան, բոլոր պարիսպի՛ նորա
անկան,

Բար ի Բարի վերայ ուրե՛ք թէ՛ զըտանել նայիս՝ ոչ
կան, առա՛ղ....

Որոշ գեղեցկաչէն ու ճոխ քաղաքներ միջնադարեան մեր սիրերգուների համար համեմատութեան եզրեր են դարձել՝ սիրելի կանանց եւ նրանց բարեմասնութիւնները գովերգելու համար: Այսպէս, մեր առաջին սիրերգու Կոստանդին Երզնկացին սիրած կնոջը պատկերում է նաեւ «քաղաք Ջինումաչին» փոխաբերութեամբ⁵⁹: Իսկ Յովհաննէս Թլկուրանցին իր գեղեցկուհուն կոչում է «քաղաք Խուլթայ, Ջինումաչին ու Պուրսայու բերած պաշար», «աղուոր քաղաք, բարձր ու ամուր բերդ»: Ահա եւ այդ գեղեցկուհու համբոյրի ու վարսերի «գինը».

Պագ մի յերեսէդ ածէ զեզընկան,

56 Ներսէս Շնորհալի, *Վիպասանութիւն*, աշխատասիրութեամբ Մ. Մկրտչեանի, Երեւան, 1981, էջ 31, 97:

57 Տե՛ս Ա. Սրապեան, *Յովհաննէս Երզնկացի, ուսումնասիրութիւն եւ քննադրեր*, Երեւան, 1958, էջ 161-162, 206, 216:

58 Յովասափ Սեբաստացի, *Բանաստեղծութիւններ*, աշխատասիրութեամբ Վ. Պ. Գետրգեանի, Երեւան, 1964, էջ 138-139:

59 Կոստանդին Երզնկացի, *Տաղեր*, աշխատասիրութեամբ Ա. Սրապեանի, Երեւան, 1962, էջ 135:

ՋՀապաշ ու գեաման, զՏիլ ու զՀրնդուստան,

երկու վարսդ է գին Չինի եւ Խուրան,

Պուլղար ու զԼստմբոլ ու շահրի եագտան⁶⁰...

Մեկ այլ անուանի սիրերգու՝ Նաղաշ Յովնաթանն իր գեղեցկուհուն համարում է «Քաղաք Խաթայի, Մոսկով» եւ որպէս առաւել զգայական սիրո երգիչ, գովերգելով սիրուհու ծոցը, ասում է.

Ծոցդ կայ երկու քաղաք գառնըջան.

մէկն Լսպահան է եւ մէկըն՝ Քեաշան...

Մեկ այլ տաղի մէջ էլ իր գեղեցկուհու կրծքի շքեղութիւնը մատնանշելու համար այն համարում է «Յուանգստան չէն քաղաք», այլեւ Հաշտարխանից (Աստրախան) նոր եկած «բեռն-բարխանայ»⁶¹:

Բազում քաղաք-փոխաբերութիւններ կան յատկապէս մեր խոշորագոյն սիրերգուի՝ Սայաթ-Նովայի սիրային գովերգերում: Մի սիրերգում, որպէս հեռաւորութիւն այլաբերող քաղաքներ նա յիշատակել է Աֆղանստանի Բալխ եւ Միջին Ասիայի Բուխարա քաղաքները («Խելքս թուաւ, Բալխ ու Բուխարա հասաւ»): Տարբեր այլաբերական իմաստաւորումներով զուգակցաբար կիրառել է նաեւ Շամ-Դամասկոս եւ Հալաբ-Հալեպ քաղաքանունները

«Չգիտեմ ո՞ւր փախչեմ սիրուհու պատճառով, կքոչեմ Հալեպ կամ Դամասկոսում կթաքնուեմ»: «Ամեն մարդ, կակաչի պէս, մինչեւ մայրամուտ չի ապրի, կանգ կառնի Հալեպում, Դամասկոս չի հասնի»: «Հալեպի միջով անցաւ. քեզ մոտ Շամի համար եկա»:

Իր անզուգական Գոզալին եւ նրա բարեմասնութիւնները սիրերգուն իր եռալեզու խաղերում համեմատել է մի շարք

քաղաքների, նրանց շքեղ կառոյցների, ճոխ շուկաների ու մեծարժէք ապրանքների հետ, ինչպէս.

«Շիրազու շուշա (ապակեայ սափոր) իս», «Շիրազու շուշումըն ածած նաբաթէ շարբաթըն դուն իս», «Շիրազում պատրաստուած կանաչ սափոր ես», «Շիրազի, Շամախիի սափոր», «Խորասանու Քալաթըն⁶² դուն իս», «Խորասանի պողպատէ թուր ես», «Վենետիկի ընտիր ոսկի», «Դու Մարանդի շուկա», «Թաւրիզի ընտիր թիմաջ (սեկ)», «Ստամբուլի ջունայի (կերպաս)», «մաթահ (ապրանք) Շահրադէլ⁶³ բազարի», «դու՝ Բաղդադ», «Բաղդադի կռնկ»:

Ուշագրաւ է, որ մի սիրերգում իր գեղեցկուհուն գովերգելու համար երգիչը յիշատակում է ոչ միայն Հնդկաստանը, Արաղստան-Իրաքը եւ յունական կղզիներ Կիպրոսն ու Քիոսը, այլեւ Պարսկաստանի Ղում, Քաշան եւ Քիրման քաղաքները.

«Թող քեզ մատաղ լինի ողջ Հնդկաստանը, Ղումը, Քաշանը, Քիրմանն ու Արաղստանը. մազիդ արժէքն են Կիպրոսն ու Քիոսը»:

Վերջապէս, նշենք, որ սայաթնովեան երգերում փոխաբերաբար պատկերուած է նաեւ «հազար թաղ ունեցող» սրտի կամ սիրո քաղաքը, որը մարդու ներաշխարհն է, զգացմունքներով հարուստ սիրող ու զգայուն սիրտը.

«Փլուած է սիրոյ քաղաքս», «Սրտիդ քաղաքը պատի՛ր քարուկրէ շէնքերով», «Ի՞նչ քաղաք է՝ ամեն կողմից ունի հազար թաղ»...

Իր ինքնակենսագրական խաղում էլ Սայաթ-Նովան իբրեւ «անհող քաղաք» փոխաբերել է մայրական արգանդը...

60 Յովհաննէս Թլկուրանցի, *Տաղեր*, աշխատասիրութեամբ Էմ. Պիվազեանի, Երեւան, 1960, էջ 134, 155-156, 159:

61 Նաղաշ Յովնաթան, *Բանաստեղծութիւններ*, էջ 50-51, 64-65:

62 Քալաթը Խորասանի մերձ հոյակերտ ամրոց է:

63 Ծափրադէլը բացատրում է քաղաք (շահր) վոլգա (Ադել) գետի ափին: Բացատրում է նաեւ քաղաք Դելի:

Այսպիսով, քաղաքը թէ՛ վերացարկուած, եւ թէ՛ ընդհանուր ու որոշակի առումներով լայնօրէն արտացոլուել է հայ միջնադարեան բանաստեղծութեան մէջ, դարձել պատմա-գեղարուեստական նկա-

րագրութեան, ողբի, գովերգի ու պարսաւի առարկա, իմաստաւորուել իբրեւ այլաբնոյթ խորհրդանիշ ու փոխաբերութիւն: